

քաւեսցէ» . եւ կամ «Գ. զուարակօք սըր-
րեսցի» : Աւելի հին կանոնագրոց մէջ չը-
կան ասոնք . եւ մովսիսական օրինաց այս
կրկնութեան թելադրիչն ոչ անշուշտ մե-
ղաց քաւութեան պէտքն էր , այլ այս կա-
նոններն երեւակայող երիցուն դատարկ
եւ կամ անկուշտ փորը :

4. — Մատաղի վայրը : — Ե զարու-
հայ մեծատունն իւր հոգեւոր կոչունքը
կու տայ հոն իսկ՝ ուր սովորական խըն-
հոյքը կը կատարէր . այս ինքն իւր տան
մէջ : Առ այս ունինք նախ Մանդակու-
նւոյն վկայութիւնը՝ թէ աղքատները «քա-
ւարան կոչեցեր ի տուն քո» . եւ թէ
«մի՛ զոք ի կարողաց եւ կամ ի մարմնա-
ւոր սիրելեաց քոց մուծանիցես ի տուն
քո՝» մատաղին մասնակցելու համար (59) :
Յետոյ կան Ներսէս Աշտարակեցւոյն կա-
նոնները , որ կը դատապարտեն զանոնք՝
որ «ոչ կամեցան տակել ի տուն զքահա-
նայս եւ զպաշտօնեայս եւ զմատուցողս
պատարագին» . այլ սովոր էին «աննել
զտունս իշրեակց թերակատար յօրհնութենէ
քահանայիցն» , հոն տանելով քահանայա-
կան շնորհէ զրկուածները (Աշտ. Գ) : Այս
վկայութեանց մէջ ուրեմն շատ յայտնի է
տունն՝ իբրեւ տեղի մատաղի :